

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԷ ԵՒ ՅՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

ՄԵՅԷՒ ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եւրոպական մամուլից առանձնացրել ենք Մեյէի 22 դրախտական Հ. Աճառեանի 15 անուն աշխատութեան մասին⁴¹ : Դրանցում Մեյէն յայտնել է իր կարծիքը հայ հոշակաւոր լեզուարանի աշխատանքային կորոյի, լեզուարանական մեթոտի, արտակարգ ջանասիրութեան, բացառիկ լատատեսութեան, լեզուարանական եւ բանասիրական համակողմանի դործունէութեան արդասիքների մասին : Մէջբերումներ կատարենք այդ դրախտութիւններից :

«Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ» աշխատութեան դրախտութեան մէջ Մեյէն ասել է. «Գիրքը ... գրուած է հեղինակին բնորոշ բարեխղճութեամբ եւ անլիճելի մասնագիտութեամբ» (1902 թ.) :

«Քննութիւն Ղարապաղի բարբառին».— «Փարիզում եւ Սթրասպուրկում լեզուարանական մեթոտներին խորամուխ լինելուց յետոյ, Պրն. Աճառեանը վերադարձել է Հայաստան եւ եռանդով զբաղուել այն ամենի զարդացմամբ, որ վերաբերում է իր ազգային լեզուի պատմութեանը : Նրա հրատարակած դանդան աշխատութիւնների մէջ, որոնք վկայում են ինչպէս նրա աշխատանքային զարմանալի կարողութեան, այնպէս էլ արեւելեցիների մօտ քիչ պատահող մեթոտական խտտապահանջութեան եւ քննուած ամէն մի կէտի շուրջը կատարեալ ճշգրտութեան հասնելու մտահոգութեան մասին, ամենանշանակալիցը անտարակոյս այստեղ յիշատակուող գիրքն է» (1902 թ.) : Գրախոսութիւնը եղբարիակուած է այսպէս. «Վերոյիշեալ գիտողութիւնները հրաբաւորութիւն են տալիս նկատելու Պրն. Աճառեանի ուսումնասիրութեան յարուցած բուռն հետաքրքրութիւնը : Սակայն դրանք չկարողացան կռահել տալ, թէ գիտական բարեխիղճ ուղղամտութեան ինչպիսի՞ տպաւորութիւն է ներգործում աշխատութիւնը... : Այն պատիւ է բերում հեղինակին եւ մեծապէս արժանի է ուշադրութեան» :

«Հայոց վկաները».— «Պրն. Աճառեանի աշխատանքային կորոյը շատ եւ շատ հիանալի է» (1904 թ.) :

41 Գրախոսութիւնները լոյս կը տեսնեն Մեյէի հայագիտական աշխատութիւնների մեր կազմած եւ հայերէն բարգմանած ժողովածուի մէջ, որն այժմ Երեւանում մամուլի տակ է : «Հրաշեայ Յակոբի Աճառեան» գրքոյկում (Երեւան, 1956), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակած մատենագիտական ցանկը (կազմողներ՝ Ել. Վլասեան եւ Հ. Մամասեբեան) ոչ միայն բերի է «Գրականութիւն Հ. Յ. Աճառեանի մասին» բաժնում, այլեւ դրանում նշուած չեն օտար լեզուով գրախոսութիւնների հեղինակները :

“Classification des dialectes arméniennes” «Դասակարգում հայ բարբառների».

Մեյլէն այս աշխատութեան մասին մի քանի դրախտութիւն է հրատարակել տարբեր հանդէսներում: Առաջինում գրել է. «Շնորհիւ անձամբ հաւաքած մեծածաւալ դիտողութիւնների եւ մշակած բաղմաթիւ աղբիւրների որոնք նրան հնարաւորութիւն են տուել ուսումնասիրուած բարբառները մասին եղած դրականութիւնը լրիւ ներկայացնելու, Պրն. Աճառեանը աշխարհում միակ մարդըն էր, որ ընդունակ էր այս աշխատութիւնը գրելու⁴²: ... Այս գիրքն արժանի է հայերէնի բարբառների ուսումնասիրութեան վերածննդի մեկնակէտը դառնալու»: Եւ իրօք, հայ բարբառագէտներն այսօր յայտարարում են, թէ Հ. Աճառեանի այս գործը հայ բարբառագիտութեան հիմնաքարն է: Մեյլէն աւելացրել է. այս աշխատութիւնը «փոքրածաւալ է, բայց յամառօրէն շարունակուած եւ երկարատեւ աշխատանքի արդիւնք է» (1909 թ.): Աշխատութեան երկրորդ դրախտականում նա գրել է. «Պրն. Աճառեանը ամբողջ կեանքը նուիրել է իր մայրենի լեզուի՝ հայերէնի ուսումնասիրութեանը: Ամենուրեք, որտեղ նրան վիճակուել է բնակուել, նա բոլոր առիթներից օգտուել է բարբառային փաստեր արձանագրելու համար: Այսպիսով արդէն կարողացել է հրատարակել տարբեր բարբառների ուսումնասիրութիւններ, որոնք վկայում են նրա դիտողական ձիրքի եւ լեզուաբանական գիտելիքների մասին» (1909 թ.): Աշխատութեան երրորդ դրախտականի վերջում կարգում ենք. «Ուսումնասիրութիւնը պատել է բերում նրա աշխատանքային կորուստի ու լեզուաբանական գիտելիքներին, որոնք այսուհետեւ անստարկելի են» (1909 թ.):

«Բնուրիւն Մարագայի բարբառին».— «Որեւէ մէկը շատ հեռու է հայերէնի բարբառագիտութեան համար այնպիսի աշխատանք կատարած լինելուց, որ մօտենայ Պրն. Աճառեանի գործին: Եւ հազուադիւրս են նրանք, որոնք նոյնչափ աշխատանք ներդրած լինեն որեւէ լեզուի բարբառների ուսումնասիրութեան համար» (1932 թ.):

«Հայերէն գաւառական բառարան».— Աճառեանն այնպիսի գիտնական է, «որ հիմնովին գիտէ հայերէնի ստուգարանութիւնը»: «Ինչպէս միշտ Պրն. Աճառեանի աշխատութիւններում, շարադրանքը յստակ է եւ սեղմ». գիրքը «յեւեռ է հակադաս պրպտումների վրայ» (1914 թ.):

«Հայերէն նոր բառեր եին մատենագրութեան մէջ».— «Եթէ Հայկական Ռորհրդային Հանրապետութիւնը որոշի հայ ազգի անցեալին կոթող կերտել (այսինքն՝ հայագիտութեան ներկայ պահանջներով հայոց լեզուի բառարան կազմել — Մ. Մ.), ապա Երեւանում իսկ է այն մարդը, որ կարող է կատարել այդ աշխատանքը. դա Պրն. Աճառեանն է» (1924 թ.): Նոյն աշխատու-

42 Էջմիածին ամսագրի 1953 թ. 5րդ համարում չակերտներու մէջ, սակայն առանց աղբիւրի նշման, այս աշխատութեան մասին գրուած է. «Այդ գիրքը միայն մէկ հոգի կարող էր գրել, — գրում է Աճառեանի դասախօս Ա. Մեյլէն—, այն էլ Հրաչեայ Աճառեանն է, որովհետեւ իմքն է, որ հայոց երկրի կենտրոնական տեղերը ման գալով, մանրակրկիտ խզմտութեամբ ուսումնասիրել է այդ բարբառները: Երկար տարիներ ինչպիսի՝ կամֆով, ինչպիսի՝ հերոսութեամբ նա գլուխ է համել այդ գործնաւոր երկասիրութիւնը, այդ էլ խիստ ծանր եւ դժգոյս պայմաններում: Աճառեանի՝ գիտական աշխարհին մեծ ծառայութիւն մատուցող այս գործը ինձ պարտաւորեցնում է յայտնել, որ Աճառեանը մեծ գիտնական է, յանուն հայագիտութեան կեանքի ամենադառն պայմաններում յազրանակող աշխատանքի մի հերոս»: Ոչ ոք չէ կասկածի անշուշտ, որ մեր ամուսնի լեզուաբանը լիիրաւ արժանի է Մեյլէի այս բարձր գնահատականին: Սակայն այդ տողերը նշանակութեամբ չկան այս աշխատութեան մասին մեր ունեցած երեք գրախօսակցներում: Յանկալի էր իմանալ աղբիւրը:

թեան Բ հատորի գրախօսականում կարգում ենք. «Պրն. Աճառեանի գործունէութիւնը հիմնաւրդ է: Նրա հոյակապ Բառարանի («Հայերէն արմատական բառարան» — Մ. Մ.) շարունակուող հրատարակութիւնը բաւական էր սովորական մի մարդու աշխատանքային կարողութիւնը գերազանցելու... Պրն. Աճառեանը, ինչպէս տեսնում ենք, այն մարդկանցից է, որոնք անընդհատ նոր փաստեր են բերում գիտութեանը» (1927 թ.):

«Հայոց գրերը» — «Ինչպէս միշտ, Պրն. Աճառեանի յստակ, ստույգ, փաստերով հարուստ շարադրանքը լաւ է ցոյց տալիս հարցի միճակը» (1930 թ.):

Մեյէի գրախօսութիւնները «Հայերէն Արմատական բառարան»ի մասին

Բառարանը, որ վերահրատարակում է Նրեանում, ժամանակին գրաւել է ողջ աշխարհի լեզուաբանական մտքի ուշադրութիւնը եւ արժանացել է շատ հայադէտների, այդ թւում եւ Մեյէի բարձր գնահատականին:

Ինչպէս նշուեց վերելում, Փարիզի Հայագիտական ընկերութեան⁴³ 1927 թ. Յունուարի 7ի նիստում Մեյէն հաղորդել է Բառարանի հրատարակութեան մասին: Նիստի արձանագրութեան մէջ կարգում ենք. «Պրն. Մեյէն աղաքարեց հայոց լեզուի ստուգարանական մեծ բառարանի հրատարակութիւնը, որ կազմել է Պրն. Հ. Աճառեանը: Այս բառարանը ամենակատարեալն է, որ ունենք հնդեւրոպական որեւէ լեզուի համար եւ նշանակալից երեւոյթ է հայ լեզուաբանութեան պատմութեան մէջ: Զեռագիրը լրիւ պատրաստ է: Հեղինակի ուժերի ներածի չափով հրատարակութիւնը արագ թափով առաջ է տարւում»⁴⁴:

«Հայերէն արմատական բառարան»ի եօթ հատորներից վեցը հեղինակի ձեռագրով խմորատիպ լոյս են տեսել առանձին պրակներով (1926 - 1932 թթ.). եօթերորդը տպագրուել է 1935ին: Հեղինակից ստանալով պրակները՝ Մեյէն հետեւել է հրատարակութեանը եւ ըստ այնմ զրա մասին տպագրել մի քանի գրախօսականներ: Հայերէն լեզուով յայտնի են միայն մէկի վերջին տողերը, որ Հ. Աճառեանը մէջբերել է Բառարանի 7րդ հատորի վերջաբանում. «Ոչ մի լեզուի համար չկայ այսքան ճոխ, այսքան կատարեալ ստուգարանական բառարան» եւ այլն:

«Արմատական բառարան»ի համարեա բոլոր գրախօսականներում Մեյէն արտայայտել է այն միտքը, թէ երբ հրատարակութիւնն աւարտուի, «Անհրաժեշտ կը լինի էական մասը ամփոփել աւելի տարածուած մի լեզուով՝ Փրանսերէն, գերմաներէն կամ անգլերէն, որովհետեւ աշխատութիւնը արժանի է, որ սահմանափակուած չմնայ հայադէտների նեղ շրջանակում. համեմատական լեզուաբանութեամբ գրադուող բոլոր մասնագէտները կարող են օգուտ քաղել դրանից: Լեզուաբանը չի կարող համեմատութեան համար որեւէ բոս օգտագործել առանց դրան գիմելու»:

Մեյէն շատ բարձր է գնահատել հայերէնի բառապանծի այս հնգապատիկ հանրագիտարանը. «Հայ լեզուաբանութեան մէջ արտակարգ երեւոյթ է

⁴³ Հիմնադրուել է Փարիզում 1920 թ. Ֆրետերիք Մաքլերի եւ Մեյէի նախաձեռնութեամբ ու զիլաւորութեամբ: Դրա պաշտօնական պարբերականը եղել է «Revue des Etudes Arméniennes» համդէտը, որ դադարել է 1933 թ.: Մեյէն միշտ էլ եղել է ընկերութեան զիւնական քարտուղարը:

⁴⁴ Revue des Etudes Arméniennes, հատ. 7, 1929, էջ 354:

այս բառարանի հրատարակութիւնը... Հայերէն արմատական բառարանը մի կոթող է, որ Երեւանի համալսարանի մեր պաշտօնակից Պրն. Աճառեանը կերտում է իր մայրենի լեզուին... Պրն. Աճառեանի ստուգարանական մեծ բառարանի հրատարակութիւնը շարունակում է այնպիսի կանոնաւորութեամբ, որ նոյնքան արժանի է հիացմունքի, որքան նրա ճոխութիւնը եւ աշխատանքի ամբողջութիւնը: Ուստի զարմանալի չէ, եթէ Մեյէի պէս խիստ դրաղուած գիտնականը որոշել է Փրանսերէն լեզուով անձամբ ամփոփել Արմատական բառարանը: Չնայած դժան հիւանդութեան եւ խիստ թուլացած տեսողութեան, որոնք խանգարել են նրա դասախօսական եւ գիտական աշխատանքը, իր աշակերտ եւ հայազէտ Լուի Մարիէսի հետ, կեանքի վերջալուսին, վերջին ուժերը երիտասարդական եռանդով նուիրարեւել է «Հայերէն արմատական բառարան»ի Փրանսերէն լեզուով ամփոփման դժուար գործին: Նոյնիսկ զրել է թարգմանութեան առաջարանը, Մարիէսի օգնութեամբ, աշխատասիրել է մի քանի էջ: Սակայն աշխատանքի աւարտից շատ առաջ Մեյէն ննջել է յաւիտեան, անաւարտ թողնելով հայադիտական մի ծանր գործի սկզբնաւորումը⁴⁵, սրին ոչ ոք նրանից յետոյ չի յանդգնել ձեռնամուխ լինել:

Հ. Աճառեանի՝ Մեյէին զրած մի նամակից պարզում է, որ դեռեւս Բառարանի երկրորդ պրակի խմբրատիպ հրատարակումից անմիջապէս յետոյ՝ 1926 թ., Մեյէն մտադիր է եղել Փրանսերէն լեզուով ամփոփել «Հայերէն արմատական բառարան»ը եւ իր առաջարկը նամակով ներկայացրել հեղինակին: 1926 թ. Յունիսի 26ի նամակում Հ. Աճառեանը նրան պատասխանել է. «Իմ բառարանը թարգմանելու ձեր առաջարկը մեծ հաճոյք պատճառեց ինձ. դա այնպիսի քաջալերանք է, որ չէի համարձակուի ակնկալել: Չեր առաջարկը հաղորդեցի իմ բարեկամներեց մի քանիսին, եւ «Խորհրդային Հայաստան» օրաթերթը հրապարակեց»: Թէեւ թերթի համարը նշուած չէր, սակայն դժուար չեղաւ գտնել հաղորդումը՝ տպագրուած 1926 թ. Յունիսի 9ին. «Լոյս տեսաւ Հ. Աճառեանի Հայերէն արմատական բառարանի երկրորդ ապակետիպ պրակը: Մեյէն զիմել է Հ. Աճառեանին եւ թոյլտուութիւն խնդրել նրա Արմատական բառարանը համառօտած ձեւով թարգմանելու Փրանսերէն»: Նոյն նամակում Հ. Աճառեանը շարունակում է. «Թիֆլիսի ռուսերէն մի պաշտօնական թերթ՝ «Ջարյա Վաստեկա»ն, ձեր առաջարկի մասին աւելի տեղեկութիւններ ստանալու համար ինձ մօտ ուղարկեց իր թղթակցին: Եւ նրան ասացի ինչ որ գիտէի, այսինքն՝ ինչ որ ինձ զրել էիք: Նոյն թերթում այս մասին լոյս տեսաւ մի հաղորդում, որ արտատպեցին Ռուսաստանի թերթերը»:

Հ. Աճառեանի մի նամակից պարզում է նաեւ, որ 1913 թ. Մեյէն մտադիր է եղել Աճառեանի հետ միասին կազմել հայերէն արմատական բառարան: 1914 թ. Յունուարի 18ի նամակում Հ. Աճառեանը նրան գրել է. «Երբ միասին կազմենք մեր ստուգարանական բառարանը, ինչպէս առաջարկեցիք եւ վերջնական պատասխանը ամէն օր սպասում եմ, այն ժամանակ կարող եմ ձեզ հաղորդել բոլոր ստուգարանութիւնները եւ հարցնել ձեր կարծիքը»: Մեյէն արդէն ստուգարանել էր հայերէն շատ բառեր: Բայց հաւանաբար պատերազ-

45 Այս մասին «Հանգէս Ամսօրեայ»ն (1936, էջ 405—406) գրել է. «Վերջին ժամանակներս ձեռնարկած էր Մեյէ Հ. Աճառեանի «Արմատական բառարան»ի փրանսերէն հրատարակութեան աւելի սեզմ ու ամփոփ ծրագրով. նպատակն էր այդ կարեւոր գործը մատչելի ընել հրապական շրջանակներուն. բայց մաիւր անաւարտ կը բողոյ այս գեղեցիկ հայագիտական ծրագիրը»: Նոյնը հաստատում են նաեւ Ա. Զօլանեանը եւ Լ. Մարիէսը 1937 թ. փետրուարի 27ին Մեյէի յիշատակին նուիրուած յուշահանգէսին:

մը խանդարել է ամէն ինչ: Նրա հայերէն ստուգարանութիւններէ քարտերի մի մասն այժմ պահուում է Երեւանի Գրականութեան եւ արուեստի թանգարանում՝ Մեյէի Ֆոնդում:

Հետաքրքրական է իմանալ, թէ Մեյէն ի՞նչ սկզբունքով էր ամփոփում կամ «աւելի սեղմ ու ամփոփ ծրագրով» ներկայացնում «Հայերէն արմատական բառարան»ի եօթ հատորները: Այս հարցի պատասխանը կտային Բառարանի Ֆրանսերէն հրատարակութեան համար նրա պրած յառաջարանը եւ Բառարանից թարգմանած մի քանի էջերը, որոնք ցարդ չեն յայտնարեւում Մեյէի ձեռագիր թղթերում: Կարելի է ենթադրել, որ ամփոփումը մասամբ պէտք է կատարուէր, հաւանաբար, ստուգարանութիւնների պատմութիւնը կրճատելու ուղղութեամբ, որովհետեւ բառարանի դրախօսութիւններում Մեյէն արտայայտել է այն միտքը, թէ «Այս թուարկումը մի քիչ երկար է. անհրաժեշտ չէ յիշատակել այն բոլոր ստուգարանութիւնները, որոնք առաջարկուել են այնպիսի ժամանակներում, երբ ստուգարանական դիտութիւնը խիստ վատահելի մեթոտներ չունէր, կամ խստապահանջութիւնից դուրի եւ երեւակայութեամբ հարուստ լեզուաբանների կողմից»: Մի ուրիշ դրախօսականում. «Պրն. Աճառեանը տեղեակ է նորագոյն աշխատութիւններին: Նա տալիս է բնութագրական ամբողջ պատմութիւնը, շատ տեղ յատկացնելով, ըստ իս, անարժէք համեմատութիւններին: Եթէ ունենք ակնյայտ, վերջնական համեմատութիւն, հին խարխափումներն արժէք չեն ներկայացնում»: Բայց «Հայերէն արմատական բառարան»ի հեղինակը իր առաջարկում «Ստուգարանութեանց պատմութիւնը» վերնագրի տակ (հատ. Ա, էջ 15-20) մանրամասն պատասխանել է հենց այս կարգի դիտողութեան: Ահա որոշ մէջբերումներ այդ մասին. «Բառարանիս այս բաժինը շատերի համար աւելորդ է: Բայց որովհետեւ ես սկզբունք եմ դրել Բ. բաժնի մէջ առնել միայն դիտութեան կողմից վաւերացուած կամ վաւերանալի ստուգարանութիւնները, բնականաբար պէտք էր մի բաժին էլ յատկացնել նրանց, որոնք ղեռ անատոյգ կամ տատամառտ են, բայց կարող են թերեւս յետոյ մի նոր օրէնքի զօրութեամբ վաւերական դառնալ: Միւս կողմից կարեւոր համարեցի նշանակել խրաքանչիւր ճիշտ ստուգարանութեան հեղինակը: Բայց շատ անգամ հեղինակն էլ մէկը չէր, այլ իրար լրացնող հեղինակների մի շարք: Պէտք էր մի առ մի սրանք էլ յիշատակել: Այս պարագաները ի նկատի առնելով՝ մտածեցի աւելի ընդարձակել ծրագիրը եւ տալ հայերէն ստուգարանութեանց ամբողջական պատմութիւնը: Որոշեցի ուրեմն ամփոփել բոլոր այն բառապնական քննութիւնները, որոնք հնագոյն ժամանակներից սկսեալ մինչեւ այսօր տեղի են ունեցել հայ կամ օտար հեղինակների կողմից»: Գործի ամբողջութեան համար հեղինակը յիշատակել է նոյնիսկ դիտական արժէքից դուրի, «այլանդակութեան գլուխ գործոց» (Հիւնքեարպէյէնտեանի) ստուգարանութիւնները, պատճառարանելով այսպէս. «Դարձեալ պէտք է շեշտեմ, որ աշխատութեանս սոյն երրորդ բաժինը ընդհանրապէս ճշմարիտ դիտական արժէքից դուրի, լեզուաբանների համար անպէտք ու աւելորդ է ... Սակայն նա պատմական նշանակութիւն ունի: Նա կարեւոր է եւ շատ կարեւոր նրանց համար, որոնք հայ լեզուի ստուգարանութեանց պատմութեամբ են զրազուում, եւ իրբեւ մի շտեմարան՝ իր մէջ է պարունակում հայ բառերի վրայ տրուած բոլոր ստուգարանութիւնները: Նա մեր կեանքի համար էլ շատ գործնական նշանակութիւն ունի: Մեր տնարոյս

«լեզուարան»ներից շատերը յաճախ նոր նոր ստուգարանութիւններ են մտորում: Մտորումը դեռ յանցանք չէ. ոմանք նոյնիսկ համարձակում են այդ բաները հրատարակութեան տալ եւ նոյնիսկ շատ լուրջ թերթերում (տե՛ս Հանդէս Ամսօրեայ): Ստուգարանութեանց պատմութիւնը յաճախ ցոյց պիտի տայ, թէ իրենց թարթափումները ուրիշների կողմից էլ են տեղի ունեցած, կամ հրատարակուած են եւ յետոյ լուրթեան դատապարտուած, եւ կամ թէ արդէն ուղիղ ստուգարանութիւնը կայ: Եւ այս բանը անշուշտ զգուշացուցիչ պիտի լինի նրանց համար՝ հրաժարուելու սխալ ու անօգուտ մտածութիւններից: Այս խօսքս մասամբ նաեւ եւրոպացի հայագէտների համար է («Հայերէն արմատական բառարան», հտ. Ա, էջ 19):

Ամէն ստուգարանութեան դէպքում չէ որ Մեյէն դէմ է եղել բառն ստուգարանելու ուղղութեամբ կատարուած բոլոր փորձերի լրիւ թուարկմանը. «Պրն. Աճառեանի բառարանը, լինելով հարուստ եւ բազմատեղեակ, երեւան է հանում հայերէն բառերի ծագման մասին մեր տեղեկութեան թերին: Վերջին հաշուով ստոյգ ոչինչ չգիտենք այնպիսի դասական եւ այնքան հին բառերի մասին, ինչպիսին են ազն եւ ազգ: Պրն. Աճառեանի յիշատակած փորձերը բացայայտօրէն խիստ անորոշ են, եւ չենք կարող դրանք իսկական րստուգարանութիւններ համարել: Այսպիսի դէպքերում է որ արուած փորձերի թուարկումը, որքան էլ դրանք քիչ յաջողուած լինեն, օգտակար է. այն ցոյց է տալիս խնդրի զժուարտութիւնը»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Երուսաղէմ

(Շար. 2)